«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
6 մայիսի 2002 թ.
Պետական գրանցման թիվ 10002078

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

26 փետրվարի 2002 թ. N 100
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԴԵՂԱՏՈՄՍԵՐԻ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ԵՎ ԴԵՂԵՐԻ ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 14.08.2001 թ. «Հայաստանի Հանրապետությունում կիրառվող դեղատոմսային ձևաթղթերը հաստատելու մասին» N 759 որոշման 4-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում ամբուլատոր-պոլիկլինիկական և դիսպանսեր հիվանդների համար դեղատոմսերի դուրս գրման և դեղերի բաց թողնման աշխատանքները կանոնակարգելու նպատակով

Հաստատում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության տարածքում դեղատոմսերի դուրս գրման և դեղերի բաց թողնման կարգը (կցվում է):

Հրամայում եմ՝

2. ՀՀ առողջապահության նախարարության էկոնոմիկայի վարչության պետ Ա. Կարապետյանին՝
ապահովել ՀՀ կառավարության 14.08.2001 թ. N 759 որոշմամբ հաստատված թմրադեղերի դուրս գրման համար նոր ձևաթղթերի տպագրումը:
3. ՀՀ առողջապահության նախարարության գործերի կառավարիչ Գ. Ստեփանյանին՝ ապահովել հիշյալ կարգի տրամադրումը ՀՀ առողջապահության համակարգի բոլոր բժշկական կազմակերպություններին, Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների առողջապահության վարչություններին:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Հ. Դարբինյանին:

Նախարար՝ **Ա. Մկրտչյան**

Հաստատված է
ՀՀ առողջապահության նախարարության

2002 թ. փետրվարի 26-ի N 100 հրամանով

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԱՏՈՄՍԵՐԻ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ԵՎ ԴԵՂԵՐԻ ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ

1. ՀՀ տարածքում բոլոր դեղերի համար (բացառությամբ առանց դեղատոմսի բաց թողնվող դեղերի) բժիշկների կողմից պետք է դուրս գրվեն դեղատոմսեր:

Դեղատոմս դուրս գրելու իրավունք ունեն այն բժիշկները, որոնք ունեն բժշկի անձնական կնիք: Դեղատոմսերը պետք է դուրս գրվեն ՀՀ կառավարության 14.08.2001 թ. N 759 որոշմամբ հաստատված դեղատոմսային ձևաթղթերով:

1.1. Դեղատոմսը դուրս է գրվում ընթեռնելի ձեռագրով, առանց ուղղումների, լատիներեն և հայերեն լեզվով:

1.2. Թմրադեղերի և թունավոր դեղերի անվանումները դեղատոմսի վրա գրվում են սկզբում, այնուհետև՝ մնացած բաղադրամասերի անվանումները:

1.3. Դեղատոմսը դուրս գրելու ժամանակ հեղուկ դեղերի քանակը գրվում է միլիլիտրերով և կաթիլներով, մնացած նյութերինը՝ գրամներով:

1.4. Արգելվում է ամբուլատոր հիվանդների համար դուրս գրել դեղեր, որոնք չեն օգտագործվում ամբուլատոր հիվանդների բուժման համար:

1.5. Թմրադեղերի և հոգեմետ դեղերի դեղատոմսային ձևաթղթերի վրա դուրս է գրվում միայն մեկ դեղ ու քանակը նշվում է նաև տառերով: Մնացած դեպքերում թույլատրվում է դուրս գրել երկու դեղ:

2. ***Սովորական դեղերը*** դեղատոմսով բաց թողնվող դեղերն են, որոնք չեն պարունակում հոգեմետ և թմրադեղեր, դուրս են գրվում ՀՀ կառավարության 2001 թ. օգոստոսի 14-ի N 759 որոշմամբ հաստատված N 3 և N 5 դեղատոմսային ձևաթղթերով: Այդ նույն ձևաթղթով են դուրս գրվում նաև զեղչով կամ անվճար տրվող դեղերը:

2.1. Պետության կողմից զեղչով կամ անվճար տրվող դեղերի համար դեղատոմսեր դուրս գրելիս առաջնորդվել ՀՀ առողջապահության նախարարի 2005 թվականի հունվարի 27-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման կարգը հաստատելու մասին» N 74-Ն հրամանի դրույթներով:

(2.1-ին կետը փոփ. 07.05.09 N 10-Ն)

2.2. Անվճար կամ զեղչով դեղատոմսերը վավերացվում են բուժկանխարգելիչ հաստատության դրոշմակնիքով, դեղատոմսի համար կնիքով, բժշկի ստորագրությամբ և անձնական կնիքով, ինչպես նաև դեղատոմսի վրա գրվում է անվճար կամ զեղչի (տոկոսի) չափը, հաշվառման մատյանի հերթական համարը, որը հաստատվում է տնօրենի ստորագրությամբ ու կլոր կնիքով:

Պետության կողմից մարդասիրական օգնությամբ ստացված դեղերի համար դեղատոմսի վրա կատարվում է նշում՝ «հումանիտար»:

2.3. Անվճար կամ զեղչով դուրս գրած դեղերի դեղատոմսերի հաշվառման համար վարվում է մատյան, որտեղ նշվում են հերթական համարը, ամիսը, ամսաթիվը, հիվանդի Ա.Ա.Հ., ամբուլատոր քարտի համարը, զեղչի կամ տոկոսի չափը, դեղատոմսի բովանդակությունը և հիվանդի ստորագրությունը: Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարած և վավերացրած կազմակերպության տնօրենի ստորագրությամբ ու կնիքով:

2.4. Պետության կողմից անվճար կամ զեղչով բաց թողնվող դեղերի դեղատոմսերի բովանդակությունը բժիշկը պարտավոր է գրանցել հիվանդի ամբուլատոր քարտի մեջ:

3. Սույն կարգի 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեղատոմսային ձևաթղթերը և դրանց դուրս գրումն ապահովում են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անհատ

ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք, պահպանելով ՀՀ կառավարության 14.08.2001 թ. N 759 որոշմամբ սահմանված դեղատոմսերի ձևաթղթերի չափսերը:

4. ***Հոգեմետ դեղերը*** ամբուլատոր հիվանդների համար դուրս են գրվում ՀՀ կառավարության 14.08.2001 թ. N 759 որոշմամբ հաստատված N 2 և N 4 դեղատոմսային ձևաթղթերով:

Դեղատոմսը պետք է գրված լինի բժշկի ձեռքով՝ վերջինիս ստորագրությամբ ու կնիքով: Դեղատոմսը պետք է գրանցվի հոգեմետ դեղատոմսերի հաշվառման մատյանում՝ մատյանի հերթական համարը գրելով դեղատոմսի վրա:

4.1. Հոգեմետ դեղատոմսային ձևաթղթերի հաշվառման համար վարվում է մատյան, որտեղ նշվում են հերթական համարը, ամսաթիվը, ընդհանուր քանակը, ում է տրվել (հիվանդի Ա.Ա.Հ.) ամսաթիվը, ամբուլատոր քարտի համարը, դեղատոմսի բովանդակությունը, ստացողի ստորագրությունը: Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարած և վավերացրած կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությամբ ու կնիքով:

5. ***Թմրադեղերը*** ամբուլատոր հիվանդների համար դուրս են գրվում ՀՀ կառավարության 14.08.2001 թ. N 759 որոշմամբ հաստատված N 1 դեղատոմսային ձևաթղթերով:

Դեղատոմսը պետք է գրված լինի բժշկի ձեռքով, պարզ ընթեռնելի՝ վերջինիս ստորագրությամբ և կնիքով հաստատված, որը վավերացվում է հաստատության դրոշմակնիքով, դեղատոմսի համար կնիքով, պետք է հաստատվի տնօրենի կամ բուժգծով տեղակալի ստորագրությամբ ու կլոր կնիքով:

5.1. Թմրադեղերի դեղատոմսային ձևաթղթերի հաշվառման համար վարվում է մատյան, որտեղ նշվում են հերթական համարը, ստացման ամսաթիվը, որտեղից է ստացված, սերիան, համարը, քանակը, բաց թողման ամսաթիվը, ում է տրվել (հիվանդի Ա.Ա.Հ.) ամբուլատոր քարտի համարը, դեղատոմսի բովանդակությունը, դեղատոմսի սերիան, համարը, ստացողի ստորագրությունը և մնացորդը: Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարած և վավերացրած կազմակերպության տնօրենի ստորագրությամբ ու կնիքով:

5.2. Թմրադեղեր բաց թողնող դեղատոմսերի բովանդակությունը, համարը և սերիան բժիշկը պարտավոր է գրանցել հիվանդի ամբուլատոր քարտի մեջ:

5.3. Թմրանյութեր պարունակող դեղատոմսերն ուժի մեջ են 20 օր:

5.4. Թմրադեղերի դեղատոմսային ձևաթղթերը պետք է պահվեն մետաղյա, չհրկիզվող պահարանում:

6. Ձեղչով և անվճար տրվող դեղերի դեղատոմսերը դեղատանը պահվում են հինգ տարի, թմրադեղերինը՝ հինգ տարի, իսկ հոգեմետ և մարդասիրական օգնությամբ ստացված դեղերինը՝ մեկ տարի: Պահպանման ժամկետի ավարտից հետո դեղատոմսերը ոչնչացվում են՝ այրվում, կազմելով համապատասխան ակտ:

7. Դեղատանը պահվում է թմրադեղերի և հոգեմետ դեղերի հաշվառման մատյաններ, որտեղ նշվում են դեղի անվանումը, ստացման ամսաթիվը, չափման միավորը, որտեղից է ստացված, փաստաթղթի համարը, քանակը, ամենօրյա ծախսը և մնացորդը: Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարված և վավերացված կազմակերպության տնօրենի ստորագրությամբ ու կնիքով:

8. Բացառությամբ թմրադեղերի, եթե դեղատոմսում դուրս գրված դեղի դեղաչափի (դոզայի) և դեղատանը առկա դեղի դեղաչափի տարբերության դեպքում, դեղատան աշխատողը կատարում է վերահաշվարկ՝ դեղի քանակը համապատասխանեցնում է, ըստ դեղաչափի, այդ մասին կատարելով նշում դեղատոմսի ձևաթղթի հետևի մասում, և բացատրում հիվանդին օգտագործման ձևը:

8.1 Սահմանել, որ դեղը հիվանդին, ոչ ամբողջական սպառողական փաթեթով բաց թողնելիս, բաց թողնվող քանակը դեղատնային գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի համապատասխան աշխատակիցը փաթեթավորում է նոր տարայում (պոլիէթիլենային տոպրակ,

սրվակ և այլն), և պիտակավորվում այն հայերեն նշելով՝ դեղի առևտրային անվանումը, դեղաձևը, դեղաչափը, բաց թողնված քանակը, սերիան, պահպանման հատուկ պայմանը (առկայության դեպքում), գրանցման հավաստագրի իրավատիրոջ անվանումը, դեղատնային գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի անվանումը կամ անուն-ազգանունը, գտնվելու վայրը, պիտանիության ժամկետը (բոլոր դեղերի համար 6 ամիս, իսկ ավելի պակաս մնացորդային պիտանիության ժամկետի դեպքում՝ փաստացի ժամկետը), բացթողման ամսաթիվը: Հիվանդի պահանջի դեպքում նոր փաթեթը ապահովվում է դեղի Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված ներդիր թերթիկով:

(8.1-ին կետը լրաց. 18.04.14 N 12-Ն)

9. Դեղատոմսը դուրս գրելու ժամանակ թույլատրելի կարևորագույն լատիներեն կրճատումները:

Կրճատում	Լրիվ գրություն	Թարգմանություն
aa	ana	- ական, հավասար
ac. acid	acidum	թթու
amp	ampulla	ամպուլ
aq.	aqua	ջուր
aq. destill.	aqua destillata	թորած ջուր
but.	butyrum	յուղ (կարծր)
comp., cps., cp.	compositus (a. um)	Բարդ
D.	Da	Տուր
D.S.	Da Signa	Տուր Նշիր
D. td.	Da talos doses	Տուր այդպիսի դեղաչափեր
dil.	dilutus	Նոսր
div in p aeq.	divide in partes aequales	Բաժանիր հավասար մասերի
extr.	extraktum	հանուկ
f.	fial.	թող դառնա
gtt.	gutta, guttae	կաթիլներ
inf.	infusum	թուրմ
in ampull	in ampullis	ամպուլաներում
in tab.	in tab(u)lettis	դեղահատերով
lin.	linimentum	հեղուկ քսուք
liq.	liquor	հեղուկ
M. pil.	messa pilunarum	հաբային զանգված
M.	Misce	խառնիր
N.	numero	թվով
ol.	oleum	յուղ (հեղուկ)
pil.	pilula	հաբ
p. aeq.	partes aequales	հավասար մասեր
pulv.	pulvis	փոշի
q. s.	quantum satis	որքան անհրաժեշտ է
r. rad,	radix	արմատ
Rp.	Recipe	վերցրու

Rep.	Repete	Կրկնիր
rhiz.	rhizoma	կոնղարմատ
S.	Signa	Նշիր
sem.	semen	սերմ
simpl.	simlex	հասարակ
sir.	siropus	օշարակ
sol.	solutio	լուծույթ
sp.	spiritus	սպիրտ
supp.	suppositorium	մոմ
tab.	tab(u)letta	դեղահատ
t-ra, tinct., tct	tinctura	ոգեթուրմ
ung.	unguentum	քսուք
vitr.	vitrum	սրվակ
ppt., praec.	praecipitatus	նստեցված
past.	pasta	մածուկ

(կարգը փոփ. 07.05.09 N 10-Ն, լրաց. 18.04.14 N 12-Ն)